ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 20.05.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2019/06

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Մասնակցությամբ՝
«Դելտա-Գրուպ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Տ. Լաճիկյան

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 18.04.2019թ. թիվ 26/26-1/6506-2019 գրությամբ «Դելտա-Գրուպ» ՍՊԸ-ին և «Տրանզիտ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություններ) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը</u>.**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի 21.03.2019թ. թիվ 01/61-4871 գրության հիման վրա, 18.04.2019թ. «Դելտա-Գրուպ» ՍՊԸ-ին և «Տրանզիտ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող

մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. <u>Երևանի քաղաքապետարանի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>

Երևանի քաղաքապետարանը 21.03.2019թ. թիվ 01/61-4871 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Տեղեկացնում եմ. որ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԵՔ-ԳՀԾՁԲ-19/38» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 07.03.2019 թվականի թիվ 2 արձանագրությամբ 2-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել սույն մրցույթին համատեղ գործունեության կարգով մասնակցած «ԴԵԼՏԱ-ԳՐՈՒՊ» ՍՊ և «Տրանզիտ» ՍՊ ընկերությունները (այսուհետ՝ Կոնսորցիում):

Երևանի քաղաքապետարանը, օրենքով սահմանված կարգով, էլեկտրոնային փոստի մոջոցով ՀՀ ՊԵԿ հարցում է ներկայացրել առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ և առաջարկել երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Կոնսորցիումի կողմից սահմանված ժամկետում չի ներկայացվել ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 43-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը:

Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում սպանձնված պարտավորության խախտում:

Հիմք ընդունելով Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետը գնահատող հանձնաժողովը որոշեց՝ մերժել Կոնսորցիումի կողմից ներկայացրած հայտը և գնման ընթացակարգը 2-րդ

չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցնող մասնակից հայտարարել հաջորդող տեղ զբաղեցրած մասնակցին:

Հիմք ընդունելով «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը «ա» ենթակետի պահանջը՝ առաջարկում եմ Ընկերության նկատմամբ կիրառել «Գնումների մասին» օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով սահմանված դրույթը:

Կից տրամադրվում են Ընկերության հայտը մերժելու վերաբերյալ հիմք հանդիսացած համապատասխան փաստաթղթերի պատճենները:»:

3. <u>«Դելտա-Գրուպ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 25.04.2019թ. գրությամբ դիմել է «Դելտա-Գրուպ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 18.04.2019թ. թիվ 26/26-1/6506-2019 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել Ընկերության գրավոր կարծիքը:

Ընկերությունը ներկայացնելով գրավոր դիրքորոշում, հայտնել է հետևյալը.

«Ինչպես Ձեզ հայտնի է ՀՀ ֆինանսների նախարարությունը գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «ԴԵԼՏԱ-ԳՐՈՒՊ» և (ՏՐԱՆՋԻՏ) ՍՊԸ կոնսորցիումին /այսուհետ՝ Կոնսորցիում/ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Վերը նշվածի վերաբերյալ հայտնում ենք, որ.

1. Երևանի քաղաքապետարանի կողմից ս/թ-ի մարտի 11-ին gnumner.am կայքում հրապարակել է «ԵՔ-ԳՀԾՁԲ-19/38» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման N 2 արձանագրությունը, որի 2.1 կետում սահմանված է, որ որոշվել է տվյալ ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող հրավերով նախատեսված որակավորման պլսհանջի առկայության վերաբերյալ 2019 թվականի մարտի 11-ին հարցում ներկայացնել ՀՀ ԿԱ ՊԵԿ: Ինչպես երևում է, այդ արձանագրությամբ խոսք չկա 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին որակավորման փաստաթղթերը ներկայացնելու պահանջի վերաբերյալ ծանուցելու մասին.

2. ՀՀ կառավարության 2017թ.-ի հունիսի 1-ի թիվ 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 32-րդ հոդվածի 12-րդ ենթակետով սահմանված է, որ հրավերով և հայտով նախատեսվում են պատվիրատուի և մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեները: ֆինանսների նախարարության կողմից հաստատված հրավերների օրինակելի ձևերում նախատեսված է հատված, որտեղ պատվիրատուն ներկայացնում է իր էլ. փոստը, որին պետք է ուղարկվի փաստաթղթերը մասնակիցների կողմից, իսկ մասնակիցներն իրենց էլ.

փոստը ներկայացնում են համապատասխան գնման ընթացակարգին մասնակցելու մասին ներկայացվող դիմումի մեջ:

3. ՀՀ կառավարության 2017թ.-ի հունիսի 1-ի թիվ 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 43-րդ կետի համաձայն.

«Հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը

Տվյալ պարագայում Կոնսորցիումի կողմից ներկայացված N 1 հավելվածում որպես էլ փոստի հասցե նշված է եղել deltagroup.arm@gmail.com հասցեն /վերը նշված դիմումի կրկնօրինակը կցված է Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացված գրությանը/: Վերոգրյալ փաստերի համադրությունից պարզ է դառնում, որ Երևանի քաղաքապետարանի կողմից համապատասխան ծանուցումը պետք է ուղարկվեր deltagroup.arm@gmail.com էլ. փոստի հասցեն, այնինչ «ԵՔ-ԳՀԾՁԲ-19/38» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից որակավորման փաստաթղթեր ներկայացնելու պահանջի վերաբերյալ ծանուցումն ուղարկվել է այլ էլ. փոստի /քաղվածքը կցված է Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացված գրությանը/: Վերոգրյալով պայմանավորված կոնսորցիումը չէր կարող ենթադրել, որ ծանուցումը ուղարկվել է և այդ պատճառով էլ պատվիրատուին դեռևս չի ուղարկել իր որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով այն փաստը, որ «ԴԵԼՏԱ-ԳՐՈՒՊ» և (ՏՐԱՆՋԻՏ) ՍՊԸ կոնսորցիումը պատշաճ ծանուցված չի եղել՝ խնդրում ենք «ԴԵԼՏԱ-ԳՐՈՒՊ» և (ՏՐԱՆՋԻՏ) ՍՊԸ կոնսորցիումին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել:»:

4. <u>ՍՑ-LO-2019/06 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի փաստերի համաձայն՝

Երևանի քաղաքապետարանի կարիքների համար դրոշների տեղադրման ծառայությունների ձեռքբերման համար հայտարարվել է «ԵՔ-ԳՀԾՁԲ-19/38» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու

նպատակով հայտ է ներկայացրել «Դելտա-Գրուպ» ՍՊԸ-ն («Տրանզիտ» ՍՊԸ-ն) /կոնսորցիում/:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 07.03.2019 թվականի 2-րդ արձանագրությամբ 2-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել սույն մրցույթին համատեղ գործունեության կարգով մասնակցած «ԴԵԼՏԱ-ԳՐՈՒՊ» ՍՊ և «Տրանզիտ» ՍՊ ընկերությունները:

www.armeps.am համակարգի միջոցով «Դելտա-Գրուպ» ՍՊԸ-ին 11.03.2019թ. ուղարկված ոչ ավտոմատ ծանուցման համաձայն՝ առաջարկվել է ներկայացնել հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.03.2019թ. 4-րդ արձանագրության համաձայն՝ «Դելտա-Գրուպ» ՍՊԸ-ն ընդհանրապես փաստաթղթեր չի ներկայացրել:

Գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետը՝ որոշել է մերժել Մասնակցի հայտը:

ՀՀ ֆինանսների նախարարության 18.04.2019թ. գրությամբ ներկայացված պարզաբանման համաձայն՝ armeps էլեկտրոնային գնումների համակարգում առկա տեղեկատվության վերլուծությունը ցույց է տալիս, որ «ԵՔ-ԳՀԾՁԲ-19/38» ծածկագրով ընթացակարգի շրջանակում գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից «Դելտա-Գրուպ» ՍՊԸ-ի համակարգում գրանցած anahitnikoghosian97@gmail.com էլեկտրոնային փոստի հասցեով ոչ ավտոմատ ծանուցման եղանակով 11.03.2019թ. ժամը 11:25-ին ուղարկվել է էլեկտրոնային ուղերձ:

Միաժամանակ հայտնում ենք, որ deltagroup.arm@gmail.com էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցումներ ստանալու համար օգտվողը պետք է էլեկտրոնային փոստի հասցեի փոփոխություն կատարի իր կայք-էջի տվյալներում:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 18.04.2019թ. թիվ 26/26-1/6506-2019 գրությամբ «Դելտա-Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների

ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

Այսպես՝

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի՝

1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը.

2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի՝

32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ՝ պայմանով, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով ներկայացնում է ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր),

32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում,

43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտից հետո, ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: Նույն կարգի 44-րդ կետով սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում սույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացվում է ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից՝ կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

ՀՀ կառավարության 06.04.2017թ. N 386-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային ձևով գնումների կարգը հաստատելու մասին» կարգի՝ 16-րդ կետի համաձայն հրավերով նախատեսվում է, որ՝

1) բացառությամբ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված ընթացակարգով գնումների կատարման դեպքի, գնահատող հանձնաժողովի քարտուղարը՝ առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու օրվանից հաշված մեկ աշխատանքային օրվա ընթացքում համակարգի միջոցով առաջին տեղը զբաղեցրած

մասնակցի էլեկտրոնային փոստին ուղարկում է ծանուցում՝ որակավորումը հավաստող փաստաթղթերը ներկայացնելու մասին.

2) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը պահանջվող փաստաթղթերը հրավերով սահմանված ժամկետում ուղարկում է հրավերում նշված գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստին: Քարտուղարը պարտավոր է մասնակցի որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերն ստանալու օրը հաստատել դրանց ստանալու հանգամանքը՝ հրավերում նշված իր էլեկտրոնային փոստից մասնակցի էլեկտրոնային փոստին հավաստում ուղարկելու միջոցով:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- Հանձնաժողովի 07.03.2019 թվականի 2-րդ արձանագրության համաձայն՝ 2-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած համատեղ գործունեության կարգով մասնակցած «ԴԵԼՏԱ-ԳՐՈՒՊ» ՍՊ և «Տրանզիտ» ՍՊ ընկերություններին առաջարկվել է ներկայացնել «ԵՔ-ԳՀԾՁԲ-19/38» ծածկագրով ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

- «Դելտա-Գրուպ» ՍՊԸ-ն («Տրանզիտ» ՍՊԸ-ն) /կոնսորցիում/ պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը չի ներկայացրել:

Վերոգրյալի հաշվառմամբ գնահատող հանձնաժողովը որոշել է մերժել Ընկերության ներկայացրած հայտը:

Տվյալ դեպքում առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացրել հրավերով նախատեսված փաստաթղթերը, որպիսի պայմաններում այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում, հիմք ընդունելով Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը:

Վերոնշյալով պայմանավորված, հերքվում են «Դելտա-Գրուպ» ՍՊԸ-ի՝ էլեկտրոնային ծանուցումը Ընկերության կողմից մասնակցության մասին դիմումում նշված էլեկտրոնային փոստին ուղարկելու մասին փաստարկները, քանի որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ Էլեկտրոնային ձևով գնումների դեպքում գնահատող հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի էլեկտրոնային փոստին ուղարկում ծանուցում՝ որակավորումը հավաստող փաստաթղթերը ներկայացնելու պահանջի մասին, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 06.04.2017թ. N 386-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային ձևով գնումների կարգը հաստատելու» կարգի 16-րդ կետի դրույթները:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում

է այն եզրակացության, որ «Դելտա-Գրուպ» ՍՊԸ-ն («Տրանզիտ» ՍՊԸ-ն) /կոնսորցիում/, հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չներկայացնելով հրավերով նախատեսված փաստաթղթերը, խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 30-րդ հոդվածի 6-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 18.04.2019թ. թիվ 26/26-1/6506-2019 գրությամբ «Դելտա-Գրուպ» ՍՊ և «Տրանզիտ» ՍՊ ընկերություններին /կոնսորցիում/ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել:

2. «Դելտա-Գրուպ» ՍՊ և «Տրանզիտ» ՍՊ ընկերություններին /կոնսորցիում/ ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու (2) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝

ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ